

ԻՆՔՆԱԿԵՆ ՍԱԳՐՈՒԹԻՒՆ

Ծնած եմ 1952 թուին Պատմական Հայաստանի Սղերդ ֆաղաֆը, ուր ստացած եմ նախնական ուսումս, որմէ ետք անցած եմ Պոլիս ուսանելու համար Սուրբ Խաչ Դպրեմանքին մէջ:

1967ին ուսանելու գացած եմ Երուսաղէմ, ուր աւարտած եմ տեղւոյն Հոգեւոր նեմարանը:

1971ին ձեռնադրուած եմ արեղայ:

1975ին ուսանած եմ Լոնտոնի համալսարանի Արքայական Քոլեճը, աւարտելով այն 1980 թուին, ստանալով B.A. տիքլով:

1981ին նշանակուած եմ Զուիցբերիոյ հայոց հոգեւոր հովիւ, ուր կը ծառայեմ մինչեւ այսօր:

1983-86 հետեւած եմ "Ֆրիպարկ" համալսարանի Աստուածաբանական նեմարանի Մագիստրոսի տիքլովի դասընթացներուն եւ յաջողութեամբ աւարտած եմ: 1986ին Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին Կաթողիկոսին կողմէ նշանակուած եմ իբրեւ Հայ Եկեղեցւոյ ներկայացուցիչ՝ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի Կեդրոնական վարչութեան մօտ:

ՎԻԳԷՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅԲԱԶԵԱՆ

ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿՈՆԴԱԿԸ
ՍԱՀԱԿ ԳԱԼԱՅՃԵԱՆԻՆ ՇՆՈՐՀՈՒԱԾ

21 Նոյեմբեր 1992 երեկոյեան ժամը 7:30ին, գլխաւորութեամբ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, Միաբանութիւնը եւ գաղութիս Հայ Երիտասարդաց Միութեան Վարչական անդամները առաջնորդութեան Միութեան Թէէէեան Սրահը, յիշատակելու 55 ամեակը Միութեան հիմնադրութեան:

Մշակութային յայտագիրէն եւ 55 ամեայ տարեդարձը յիշատակող գնահատանքի խօսքերէ ետք, պարգեւատրութեան Միութեան հիմնադիր եւ տարեց անդամները:

Ապա Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը իր փակման խօսքին ընթացքին յանուն Սրբոց Յակոբեանց Միաբանութեան եւ իր կողմէ շնորհաւորեց պարգեւատրեալները եւ ֆաջալերեց Հ. Ե. Միութեան անդամները հետեւելու իրենց երէցներու Տիպար օրինակին:

Պատրիարք Սրբազան Հայրը պատեհ նկատեց այս առիթով գնահատելու վանքի կրօնաբոյր մթնոլորտին մէջ սնած ուսանած եւ աւելի քան 50 տարիներէ ի վեր

ամենայն ձեռնհասութեամբ եւ անսակարկ ժանասիրութեամբ պատրիարքարանիս զանազան մարգերուն մէջ պաշտօնավարող՝ վաստակաշատ Տիար Սահակ Գալայնեանը: Անդրադարձաւ Պր. Գալայնեանի տարիներու նուիրեալ վեհանձն ծառայութեանց, ըլլալ Հ. Ե. Միութեան շեմէն ներս եւ կամ Սրբոց Յակոբեանց Հայոց Վանքի դիւաններու, Գալուստ Կիւլպէնկեան Մատենադարանի, Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի, եւ կամ Մայր Տաճարի կեանքէն ներս: Եւ մանաւանդ շեշտեց անոր "ուխտի գաւառը" ըլլալը: Իր ծնողքը զինքը նուիրած էին Գլխադիր Ս. Առաքեալին, նպատակ ունենալով որ ան ծառայէ եկեղեցիին: Մինչեւ այսօր ան հաւատարիմ կը մնայ իր ծնողաց ուխտին, անձանձրոյթ եւ անտրտունջ իր ծառայութեամբ:

Պատրիարք Սրբազան Հայրը իր գնահատական խօսքերուն միացուց նոյնպէս Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Առաջին Սրբազնագոյն

Կաթողիկոսի գնահատական սիրոյ ողջունի եւ Օրհնութեան Գիրը, իր Կոնդակով առ Տիար Սահակ Գալայեան:

Ամենայն Հայոց Հայրապետի Օրհնութեան Կոնդակը՝ Հոգշ. Տ. Աւետիս Արղ. Իփրանեանի կողմէ կարդացուած՝ ունկնդրուեցաւ յոտնկայս, ուր Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը Սահակ Գալայեանին կը շնորհէր Սուրբ Ներսէս Շնորհալի շքանշանը, զոր Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը անցուց Պր. Սահակի լափակէն:

Այս յուզումնալի խնդրեցեն վերջ, Պր. Գալայեանը խոր եւ ջերմ զգացումներով տոգորուած յայտնեց իր անկեղծ շնորհակալութիւնները Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր, ինչպէս նաեւ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին, բարեմաղթելով քաջառողջութիւն եւ արեւշատութիւն:

Պրն. Գալայեան իր յուզումին եւ առողջական վիճակին պատճառաւ, իր շնորհակալութեան գրաւոր խօսքը խնդրեց որ իր հարազատներէն Տիկին Նորա Նազգաշեանը կարդայ, ուր հակիրճ կերպով կ'անդրադառնայ իր կենսագրականին: Այսպէս կ'արտայայտուի:

Ծնողքս, ինձմէ առաջ, 9 զուակ կորսնցուցեր են: Նրբ լոյս աշխարհ եկեր եմ, հազիւ 3 ամսուայ եմ եղեր, երբ ծնողքս ուխտեր են գիս Նրուսաղէմ տանիլ եւ Սուրբ Յակոբ Գլխադիր Առաքելին նուիրել, նպատակ ունենալով որ եկեղեցիին ծառայեմ: Հոգեպէս մխիթարուած կը զգամ

ինձգինքս, որ կարողութեանս ներածին չափ կատարած եմ իրենց ուխտը: Պիտի շարունակեմ ծառայութիւնս եկեղեցիին Տիրոջ զօրութեամբ եւ օգնութեամբ:

Պրն. Գալայեան քանի մը խօսք եւս րբաւ Հ.Ե.Մ.ի վարչութեան:

Հայ Երիտասարդաց Միութեան անդամագրուած եմ 16 տարեկանէս սկսեալ, եւ զայն կը նկատեմ իմ երկրորդ տունս:

Զանազան մարզերու մէջ բերած եմ մասնակցութիւնս, բայց ամէնէն աւելի հպարտ կը զգամ ինձգինքս որ երաժշտական բաժինը վերցուցած եմ, ըլլայ Միութեան երգչախումբը ղեկավարելով, ըլլայ նուագախումբին պատասխանատու ղեկը ստանձնած ըլլալով:

Տիկինս ալ, իր տարիներու աշխատանքով, կարելի՛ն ի գործ դրած է յօգուտ Միութեան բարգաւաճման, յառաջդիմութեան եւ երիտասարդուհեաց բաժնի գործունէութեանց յաջողութեան:

Տիկնոջս՝ Սիրարփիին եւ իմ կողմէ մեր շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը կը յայտնենք Ամեն. Սրբազան Պատրիարք Հօր՝ իր գնահատութեան համար, եւ Ամենայն Հայոց Սրբազնագոյն Կաթողիկոսին, Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետին, իր օրհնութեան եւ պարգեւատրումին համար:

Հանդիսութիւնը աւարտեցաւ Ամեն. Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ եւ խմբովին երգուած "Հայր Մեր"ով:

ԱԻԵՏԻՍ ԱԲՂ. ԻՓՐԱՃԵԱՆ